ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-19/SS-2

ք. Երևան «30» հոկտեմբերի 2019 թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գագիկ Միրիջաբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մատակարար.ԱՄՎ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վարդիթեր Թումասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տեղեկատվական տեխնոլոգիաների սարքերի պահպանման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ նաև ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4 984 800 (չորս միլիոն ինը հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[4]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[5]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն 900011288025 01223338	«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ ք.Երևան, Լ. Լիսինյան 8 «Արդշինբանկ» ՓԲԸ Հ/Հ 2470101224450010 00454158
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«30» 10 2019 թ. կնքված
ՀԿԱԾ-ԳՀՇՁԲ-19/SS-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ***	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50311210/2	Տեղեկատվական տեխնոլոգիաների սարքերի պահպանման ծառայություններ՝ այդ թվում	դրամ	4984800	1	Ք. Երևան, Հալաբյան 41/ա	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.12.2019թ.՝ համաձայն Աղյուսակ 2-ի (ներկայացված է ստորև)
		HP 12A, HP 13A, Canon 303, Canon 703, Canon FX-10 տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		HP 35A, HP 78A, HP 85A տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		HP 05A, HP 80A, Canon 719, Canon EP-27, Universal CE505A/CF280A/719 տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		HP 64A տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		HP 80X տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		Brother TN-3145, DR-3115 տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		Kyocera TK-1130, DK-150, DV-1130E տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		Lexmark X264H11G տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		Xerox 650N05434, 650N05435, 106R03621, 101R00555 տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					

		Canon 052 տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		Canon 052H տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում՝ ըստ ստորև ներկայացվող պահանջների					
		HP LJ P1005, HP LJ 1018, Canon LBP2900 տպիչների լիարժեք սպասարկում					
		Canon LaserBase MF3110, HP LJ 1536dnf MFP տպիչների լիարժեք սպասարկում					
		Canon LBP6670dn, HP LJ P2055dn, HP LJ Pro 400 M401dn տպիչների լիարժեք սպասարկում					
		HP LJ P4014dn տպիչների լիարժեք սպասարկում					
		HP LJ Pro 400 MFP M425dn տպիչների լիարժեք սպասարկում					
		Brother MFC-8860dn, Kyocera ECOSYS M2030dn, Lexmark X264dn, Xerox WorkCenter 3345 տպիչների լիարժեք սպասարկում					

** Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:*
**** Ընդհանուր գինը պետք է ձևավորվի Աղյուսակ 2ով ներկայացվող հաշվարկին համապատասխան*

1. Տպիչների սպասարկման ծառայություններ

1.1. Տպիչի սպասարկման անհրաժեշտություն առաջանալու դեպքում Պատվիրատուն համապատասխան «Տպիչի սպասարկման ծառայությունների հայտ» (այսուհետ՝ Հայտ) է ներկայացնում Կատարողին: Հայտում նշվում է տպիչի տեսակը, տպիչի գործարանային համարը, առկա թերությունների նկարագրությունը: Հայտը ներկայացվում է Կատարողին էլեկտրոնային փոստի միջոցով՝ Պատվիրատուի լիազոր աշխատակիցը Հայտի էլեկտրոնային տարբերակը պարունակող նամակ է ուղարկում Կատարողի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին: Հայտը համարվում է ներկայացված՝ Պատվիրատուի էլեկտրոնային փոստի սերվերի կողմից (mail.harkadir.am) նամակը Կատարողի էլեկտրոնային փոստի սերվերին բարեհաջող առաքվելու պահից:

1.2. Հայտը ներկայացված լինելու պարագայում տպիչի լիարժեք սպասարկումը Կատարողի կողմից պետք է իրականացվի հետևյալ ժամկետներում.

1.2.1. եթե Հայտը Պատվիրատուի կողմից ներկայացվել է մինչև աշխատանքային օրվա ժամը 13:00-ն, ապա տպիչի լիարժեք սպասարկումը Կատարողը պետք է իրականացնի մինչև Հայտի ներկայացման օրվանը հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ն,

1.2.2. եթե Հայտը Պատվիրատուի կողմից ներկայացվել է աշխատանքային օրվա ժամը 13:00-ից հետո, ապա տպիչի լիարժեք սպասարկումը Կատարողը պետք է իրականացնի մինչև Հայտի ներկայացման օրվանը հաջորդող երրորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ն:

1.3. Տպիչի լիարժեք սպասարկումը ներառում է.

1.3.1. տպիչի տեղափոխում Կատարողի աշխատավայր (իրականացվում է անհրաժեշտության պարագայում, համապատասխան երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիմքով),

1.3.2. տպիչի մաշված, վնասված կամ անաշխատունակ մասերի փոխարինում նոր պահեստամասերով, ներառյալ թերմոթմբուկը, թերմոտարը, ռետինե լիսեռը (կառատրոն), թուղթ քաշող ռետինները, մայրական սալիկը, ատամնանիվները և այլ: Պահեստամասերը պետք է տրամադրվեն Կատարողի կողմից,

1.3.3. Հայտում նշված թերությունների վերացում,

1.3.4. սպասարկման ընթացքում հայտնաբերված՝ Հայտում չնշված թերությունների վերացում,

1.3.5. տպիչի պրոֆիլակտիկ մաքրման աշխատանքների իրականացում,

1.3.6. համարժեք այլ աշխատունակ տպիչի տրամադրում Պատվիրատուին՝ ժամանակավոր օգտագործման համար, եթե տպիչի սպասարկման աշխատանքները տևելու են 1.2 կետում սահմանված ժամկետներից ավելին,

1.3.7. բոլոր թերությունները վերացված և անթերի աշխատունակ վիճակում գտնվող տպիչի հանձնում Պատվիրատուին՝ ք.Երևան, Հալաբյան 41/ա հասցեում, համապատասխան երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիմքով:

1.4. Կատարողի կողմից մատուցված տպիչի սպասարկման ծառայությունները 1.3 կետի սահմանումներին չհամապատասխանելու յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուն կազմում է «Տպիչի սպասարկման ծառայությունների թերությունների ակտ» (այսուհետ՝ Ակտ) և այն ներկայացնում է Կատարողին էլեկտրոնային փոստի միջոցով՝ Պատվիրատուի լիազոր աշխատակիցը Ակտի էլեկտրոնային տարբերակը պարունակող նամակ է ուղարկում Կատարողի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին: Ակտը համարվում է ներկայացված՝ Պատվիրատուի էլեկտրոնային փոստի սերվերի կողմից (mail.harkadir.am) նամակը Կատարողի էլեկտրոնային փոստի սերվերին բարեհաջող առաքվելու պահից:

1.5. Տպիչների սպասարկման ծառայությունները Կատարողի կողմից պետք է մատուցվեն սույն պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում՝ բոլոր աշխատանքային օրերին, Պատվիրատուի ք.Երևան, Հալաբյան 41/ա հասցեում:

2. Քարթրիջների սպասարկման ծառայություններ

2.1. Քարթրիջի սպասարկման անհրաժեշտություն առաջանալու դեպքում Պատվիրատուն համապատասխան «Քարթրիջի սպասարկման ծառայությունների հայտ» (այսուհետ՝ Հայտ) է ներկայացնում Կատարողին: Հայտում նշվում է քարթրիջի տեսակը և քարթրիջի պայմանական համարը: Հայտը ներկայացվում է Կատարողին էլեկտրոնային փոստի միջոցով՝ Պատվիրատուի լիազոր աշխատակիցը Հայտի էլեկտրոնային տարբերակը պարունակող նամակ է ուղարկում Կատարողի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին: Հայտը համարվում է ներկայացված՝ Պատվիրատուի էլեկտրոնային փոստի սերվերի կողմից (mail.harkadir.am) նամակը Կատարողի էլեկտրոնային փոստի սերվերին բարեհաջող առաքվելու պահից:

2.2. Հայտը ներկայացված լինելու պարագայում քարթրիջի լիարժեք սպասարկումը Կատարողի կողմից պետք է իրականացվի հետևյալ ժամկետներում.

2.2.1. եթե Հայտը Պատվիրատուի կողմից ներկայացվել է մինչև աշխատանքային օրվա ժամը 13:00-ն, ապա քարթրիջի լիարժեք սպասարկումը Կատարողը պետք է իրականացնի մինչև Հայտի ներկայացման օրվանը հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 18:00-ն,

2.2.2. եթե Հայտը Պատվիրատուի կողմից ներկայացվել է աշխատանքային օրվա ժամը 13:00-ից հետո, ապա քարթրիջի լիարժեք սպասարկումը Կատարողը պետք է իրականացնի մինչև Հայտի ներկայացման օրվանը հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ն:

2.3. Քարթրիջի լիարժեք սպասարկումը ներառում է.

2.3.1. քարթրիջի տեղափոխում Կատարողի աշխատավայր (իրականացվում է անհրաժեշտության պարագայում, համապատասխան երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիմքով),

2.3.2. քարթրիջի մաշված, վնասված կամ անաշխատունակ մասերի փոխարինում նոր պահեստամասերով, ներառյալ թմբուկը, ռետինե լիսեռը (կառատրոն), մագնիսական լիսեռը, չափիչ դանակը, մաքրող դանակը, քարթրիջի կորպուսը, չիպը և այլ: Պահեստամասերը պետք է տրամադրվեն Կատարողի կողմից,

2.3.3. քարթրիջի պրոֆիլակտիկ մաքրման աշխատանքների իրականացում,

2.3.4. քարթրիջի վերալիցքավորում համապատասխան մոդելի համար նախատեսված ներկափոշիով՝ Աղյուսակ 1-ում նշված նորմատիվային չափանիշներին համապատասխան, ապահովելով բարձր որակի մուգ տպագրություն՝ գործարանայինին մոտ,

2.3.5. բոլոր թերությունները վերացված և անթերի աշխատունակ վիճակում գտնվող քարթրիջի հանձնում Պատվիրատուին՝ ք.Երևան, Հալաբյան 41/ա հասցեում, համապատասխան երկկողմանի ստորագրված հանձնման-ընդունման ակտի հիմքով:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի անհրաժեշտության դեպքում ստուգել վերալիցքավորված քրթրիջի համապատասխանությունը Աղյուսակ 1-ում նշված նորմատիվային չափանիշներին:

2.5. Կատարողի կողմից մատուցված քարթրիջի սպասարկման ծառայությունները 2.3 կետի սահմանումներին չհամապատասխանելու յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուն կազմում է «Քարթրիջի սպասարկման ծառայությունների թերությունների ակտ» (այսուհետ՝ Ակտ) և այն ներկայացնում է Կատարողին էլեկտրոնային փոստի միջոցով՝ Պատվիրատուի լիազոր աշխատակիցը Ակտի էլեկտրոնային տարբերակը պարունակող նամակ է ուղարկում Կատարողի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին: Ակտը համարվում է ներկայացված՝ Պատվիրատուի էլեկտրոնային փոստի սերվերի կողմից (mail.harkadir.am) նամակը Կատարողի էլեկտրոնային փոստի սերվերին բարեհաջող առաքվելու պահից:

2.6. Քարթրիջների սպասարկման ծառայությունները Կատարողի կողմից պետք է մատուցվեն սույն պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում՝ բոլոր աշխատանքային օրերին, Պատվիրատուի ք.Երևան, Հալաբյան 41/ա հասցեում:

Աղյուսակ 1. Քարթրիջների աշխատունակության նորմատիվային չափանիշներ

N	Քարթրիջի մոդել	75գ/մ² խտությամբ թղթի օգտագործմամբ, էջի 5% լցվածությամբ, A4 չափսի, առանց թերությունների արտատպվող էջերի միջին* քանակ (հատ)	Լիցքավորվող ներկափոշու արտադրող, անվանում/տեսակ/մոդել**	Մեկ լիցքավորման դեպքում ծախսվող ներկափոշու նորմատիվային քաշ, գրամ**
1	2	3	4	5
1.	Brother TN-3145	3500	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. BR-05	210
2.	Brother DR-3115	25000	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. BR-05	800
3.	Canon 303	2000	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	160
4.	Canon 703	2000	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	160
5.	Canon 719	2100	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	200
6.	Canon EP-27	2500	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	160
7.	Canon FX-10	2000	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	160
8.	HP 05A	2300	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	200
9.	HP 12A	2000	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	160
10.	HP 13A	2500	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	160
11.	HP 35A	1600	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	110
12.	HP 64A	10000	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	700
13.	HP 78A	2100	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	110
14.	HP 80A	2700	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	200
15.	HP 80X	6900	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	400
16.	HP 85A	1600	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	110
17.	Universal CE505A/CF280A/719	2300	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	200
18.	Kyocera TK-1130	7200	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. KM-16	150
19.	Kyocera DK-150, DV-1130E	100000	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. KM-16	1000
20.	Lexmark X264H11G	9000	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. SM-03	250
21.	Xerox 650N05434, 106R03621	8500	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. SM-04	300
22.	Xerox 650N05435, 101R00555	30000	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. SM-04	600
23.	Canon 052 (2199C002)	3200	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	200
24.	Canon 052H (2200C002)	9200	TESHINE IMAGING TECHNOLOGIES CO. HP-08H	400

* *Արտատպվող էջերի փաստացի քանակի շեղումը նորմատիվային քանակից չպետք է գերազանցի 5%:*

** *Նշված սյունյակները պետք է լրացվեն Մասնակցի կողմից և ներկայացվեն հայտի փաթեթի մեջ:*

Աղյուսակ 2:

ՏՊԻՉՆԵՐԻ ԵՎ ՔԱՐԹՐԻՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ, ՔԱՆԱԿՆԵՐ ԵՎ ԳՆԵՐ

N	Ծառայության տեսակի անվանում	Ծառայության քանակ	Ծառայության միավորի գին, ՀՀ դրամ*	Ծառայության գումար, ՀՀ դրամ*
1	2	3	4	5**
1.	HP 12A, HP 13A, Canon 303, Canon 703, Canon FX-10 տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	15	10	150
2.	HP 35A, HP 78A, HP 85A տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	180	2000	360000
3.	HP 05A, HP 80A, Canon 719, Canon EP-27, Universal CE505A/CF280A/719 տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	2000	2000	4000000
4.	HP 64A տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	35	10	350
5.	HP 80X տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	150	2000	300000
6.	Brother TN-3145, DR-3115 տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	15	10	150
7.	Kyocera TK-1130, DK-150, DV-1130E տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	5	10	50
8.	Lexmark X264H11G տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	15	10	150
9.	Xerox 650N05434, 650N05435, 106R03621, 101R00555 տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	160	2000	320000
10.	Canon 052 (2199C002) տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	50	10	500
11.	Canon 052H (2200C002) տեսակի քարթրիջների լիարժեք սպասարկում	50	10	500
12.	HP LJ P1005, HP LJ 1018, Canon LBP2900 տպիչների լիարժեք սպասարկում	5	10	50
13.	Canon LaserBase MF3110, HP LJ 1536dnf MFP տպիչների լիարժեք սպասարկում	15	10	150
14.	Canon LBP6670dn, HP LJ P2055dn, HP LJ Pro 400 M401dn տպիչների լիարժեք սպասարկում	150	10	1500
15.	HP LJ P4014dn տպիչների լիարժեք սպասարկում	10	10	100
16.	HP LJ Pro 400 MFP M425dn տպիչների լիարժեք սպասարկում	100	10	1000
17.	Brother MFC-8860dn, Kyocera ECOSYS M2030dn, Lexmark X264dn, Xerox WorkCenter 3345 տպիչների լիարժեք սպասարկում	15	10	150
ԸՆԴԱՄԵՆԸ***				4984800

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
900011288025
01223338

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ
ք.Երևան, Լ. Լիսինյան 8
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470101224450010
00454158

/ստորագրություն/
Կ.Տ